**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 53-Ա**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 01-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Բերդ համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու <<Բերդ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 131-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
/Զեկ.Կ.Սարգսյան/
2. Բերդ համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի տեղական բյուջեի 3-րդ եռամսյակի ընթացքի մասին:
/Զեկ.Կ.Սարգսյան/
3. 2021թվականի համար Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարների տարեկան չափերը սահմանելու մասին:
/Զեկ.Հ.Մելիքյան/
4. ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
/Զեկ.Հ.Մելիքյան/
5. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ենթակայության համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
/Զեկ.Հ.Մելիքյան/
6. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ըստ գոտիավորման հաստատելու մասին:
/Զեկ.Հ.Մելիքյան/
7. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի 2021 թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին:
/Զեկ.Կ.Սարգսյան/
8. ՀՀ Տավուշի մարզ Բերդ համայնքի բնակիչների անվամբ գրանցված փոխադրամիջոցների և շինությունների գույքահարկի արտոնություններ տրամադրելու մասին:
/Զեկ.Հ.Մելիքյան/

9. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ֆիզիկական անձանց հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին:

/Զեկ.Հ.Մելիքյան/

10. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի գույքացանկում ավելացում կատարելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

11. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող արտադրամասը, պարիսպները և ծածկը հողամասով Համլետ Գրիգորի Աթոյանին օտարելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

12. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող ավտոտնակը հողամասով Վոլոդյա Իվանի Աբգարյանին օտարելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

13. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Ներքին Կարմիր Աղբյուր գյուղի վարչական սահմանում գտնվող և որպես «ԱՆՀԱՅՏ» քաղաքացու սեփականություն փոխանցված բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

14. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող 11-061-0030-0001 ծածկագրով հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

15. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող 11-002-1025-0001 և 11-002-1023-0001 ծածկագրերով հողամասերի գործառնական նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

16. <<Տավուշի մարզի Վ.Ծաղկավանի Հրանտ Խաչատրյանի անվան թիվ 1 մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման տարածք տրամադրելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

17. <<Տավուշի Ճանապարհների շահագործման և շինարարական>> փակ բաժնետիրական ընկերությանը վարձակալությամբ տարածք տրամադրելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

18. Գյուղատնտեսական նշանակության 11-046-0014-001 ծածկագրով, 2.34555 հա մակերեսով,11-046-0011-0001 ծածկագրով, 2.39092 հա մակերեսով և 11-046-0013-0001 ծածկագրով, 1.17033 հա մակերեսով վարելահողերը աճուրդով օտարելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

19. Տրանսպորտային միջոցները անվանափոխելու, հաշվառելու և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

/Զեկ.Հ.Մելիքյան/

20. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող 11-002-0831-0001 ծածկագրով հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

21. ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի սեփականությունը հանդիսացող դեղատունը հողամասով Կարեն Արամի Հարությունյանին օտարելու մասին:

/Զեկ.Վ.Գրիգորյան/

22. Բերդի բազմագործառույթային պետական քոլեջ և Բերդի ավագ դպրոց համայնքի բնակավայրերից հաճախող սաներին հանրային տրանսպորտից անվճար օգտվելու համաձայնություն տալու մասին:

/Զեկ.Հ.Մելիքյան/

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՓԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Համայնքի ղեկավար՝** **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

**01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 54-Ն**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ <<ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 131-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ավագանու <<Բերդ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 131-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Համայնքի բյուջեի եկամուտների վարչական մասի.

ա.<<Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)>> 1257 տողում ավելացնել 3000000 (երեք միլիոն) ՀՀ դրամ: Համայնքի բյուջեի եկամուտների ֆոնդային մասի <<Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)>> 1261 տողում ավելացնել 231757084 (երկու հարյուր երեսունմեկ միլիոն յոթ հարյուր հիսունյոթ հազար ութսունչորս)ՀՀ դրամով:Իսկ<<Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի իրականացման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից>> 1382 տողում ավելացնել 57255500 (հիսունյոթ միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամով, որից 18436000(տասնութ միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամը ռուսաստանաբնակ այգեձորցիների կողմից, իսկ 38819500 (երեսունութ միլիոն ութ հարյուր տասնինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը ռուսաստանաբնակ մովսեսցիների կողմից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

**01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 55-Ա**

## ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

*Համայնքի ավագանին որոշում է՝*

1.Հաստատել համայնքի ղեկավարի հաղորդումը ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի 2020 թվականի տեղական բյուջեի 3-րդ եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն 1 և 2 հավելվածների:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**

Հավելված 1
Բերդ համայնքի
ավագանու 2020 թվականի
դեկտեմբերի 01-ի N 55-Ա որոշման

## Բերդ համայնքի 2020 թվականի եկամուտների կատարման մասին

| Հ/հ | ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐԸ | Տարեկան պլան /հազ.դրամ/ | Ճշտված պլան հազ.դրամ | 2020թ 9-ամիս | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | | Պլան | Փաստացի | Կատ.% |
| 1 | ՀՈՂԻ ՀԱՐԿ | 50350,0 | 50350,0 | 35245,0 | 23 698,7 | 67,2 |
| 2 | ԳՈՒՅՔԱՀԱՐԿ | 79650,0 | 79650,0 | 61981,0 | 59 123,3 | 95,4 |
| 3 | ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 6300,0 | 6300,0 | 4725,0 | 2 615,6 | 55,4 |
| 4 | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ | 4000,0 | 4000,0 | 3120,0 | 3 635,1 | 116,5 |
| 5 | ՀՈՂԻ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ | 15500,0 | 15500,0 | 11425,0 | 10 860,6 | 95,1 |
| 6 | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ | 55000,0 | 55000,0 | 37100,0 | 19 474,2 | 52,5 |
| 7 | ՀՈՂԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 | 0,0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **210800,0** | **210800,0** | **153596,0** | **119407,50** | **77,7** |
| | **ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ** | | | | | |
| 8 | ԴՈՏԱՑԻԱ | 770504,8 | 837003,7 | 622410,2 | 622410,2 | 100,0 |
| 9 | ՊԵՏ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑ.ՍՈՒԲՎԵՆՑԻԱ | 3500,6 | 8000,6 | 8000,6 | 6950,6 | 86,9 |
| 10 | Կապիտալ սուբվենցիա | | 231757,1 | 231757,1 | 231757,1 | 100,0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 774005,4 | **1076761,4** | **862167,9** | **861117,9** | 99,9 |
| 11 | Նվիրատվություն/ֆոնդ/ | | | 41180,5 | 41180,5 | 100,0 |
| 12 | Նվիրատվություն/վարչ/ | | 267,1 | 267,1 | 267,1 | 100,0 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 0,0 | 267,1 | **41447,6** | **41447,6** | 100,0 |
| 13 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5396,7 | 5474,3 | 4047,50 | 3831,9 | 94,7 |
| 14 | Այլ եկամուտներ | 5000,0 | 5379,9 | 3750,0 | 11641,0 | 310,4 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **10396,7** | **10854,2** | **7797,5** | **15472,9** | 198,4 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **995202,1** | **1298682,7** | **1065009,0** | **1037445,9** | 97,4 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1090164,0** | **1393644,6** | **1110237,0** | **1082458,3** | 97,5 |
| 15 | **ՏԱՐԵՍԿԶԲԻՆ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ** | **94961,9** | **94961,9** | **94961,9** | **94961,9** | 100,0 |
| 16 | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | 83136,9 | 83136,9 | 83136,9 | 83136,9 | 100,0 |
| 17 | ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ | 11825,0 | 11825,0 | 11825,0 | 11825,0 | 100,0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 2
Բերդ համայնքի
ավագանու 2020 թվականի
դեկտեմբերի 01-ի N 55-Ա որոշման

**Բերդ համայնքի 2020թ. տեղական բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման**

| Հ/հ | ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ | Տարեկան Նախատեսված ծախս /հազ.դրամ/ | տարեկան ճշտված պլ. հազ.դրամ | 2020թ. 9-ամիս | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Պլան | Փաստացի | Կատ.% |
| 1 | ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ | 266274,3 | 260442,9 | 218556,8 | 151024,8 | 69,10 |
| 2 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ/մանկապարտեզ/արտադպ.դաստ.մարզ+արվեստ+երաժշտական | 337253,9 | 338214,6 | 202940,4 | 187439 | 92,36 |
| 3 | ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԾԱՌ որից | **81549,2** | **103585,4** | **67823,1** | **36308,2** | 53,53 |
| | Գրադարան | 12764,1 | 12764,1 | 9573,1 | 8551,2 | 89,33 |
| | մշակույթի տուն | 57785,1 | 81757,0 | 50000,0 | 23321,6 | 46,64 |
| | Այլ մշակութային կազմ | 11000,0 | 9064,3 | 8250,0 | 4435,4 | 53,76 |
| 4 | **ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ , ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | 280429,9 | 280429,9 | 175087,3 | 172344,0 | 98,43 |
| 5 | ՍՈՑ ԾԱԽՍԵՐ | 6000,0 | 6000,0 | 4500,0 | 2724,5 | 60,54 |
| 6 | ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ | 30000,0 | 318179,0 | 318057,1 | 318175,6 | 100,04 |
| 7 | ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ | 1880,0 | 2230,2 | 1500,0 | 1447,7 | 96,51 |
| 8 | ՊԱՏՎԻՐԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5396,7 | 5474,3 | 4047,5 | 3264,5 | 80,65 |
| 9 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | 18040,0 | 35413,2 | 24991,8 | 24991,8 | 100,00 |
| 10 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | 6840,0 | 3329,1 | 5130,0 | 1585,5 | 30,91 |
| 11 | ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ | 56500,0 | 50845,9 | 42375,0 | 23840,1 | 56,26 |
| 12 | Վարձատրվող հասարակական աշխ. | | 4500,0 | 4500,0 | 3600,0 | 80,00 |
| 13 | ԳՈՒՅՔԻ ՀՈՂԻ ՕՏԱՐՈՒՄ | | 15000 | 15000 | 12827,3 | 85,52 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **1090164,0** | **1393644,5** | **1065009,0** | **913918,4** | 85,81 |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ.ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 56-Ա**

## 2021ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և ՀՀ հողային օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ մասով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.2021թվականի համար Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարների տարեկան չափերը 1ք.մ. համար սահմանել՝

1) խոտհարք՝այդ թվում այլ հողեր- 1(մեկ) դրամ,
2) չոռոգվող հողեր՝ չոռոգվող մշակվող -1(մեկ) դրամ, չոռոգվող չմշակվող -2(երկու) դրամ,
3) ոռոգվող հողեր՝ ոռոգվող մշակվող- 2(երկու) դրամ, ոռոգվող չմշակվող- 5(հինգ) դրամ:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021թ. հունվարի 1-ից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Համայնքի ղեկավար՝** ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

**01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 57-Ա**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 11-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 3-րդ մասի 4-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 և 2 հավելվածների:

2.Ուժը կորցրած ճանաչել Բերդ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի <<Բերդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 126-Ա որոշման N 1 և 2 հավելվածները:

3.Առաջարկել Բերդ համայնքի ղեկավարին՝ Բերդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:

4. Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկն հաստատելու մասին համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Համայնքի ղեկավար՝** ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 58-Ա**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին»ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ենթակայության համայնքային հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝համաձայն հավելվածների:

2.Ուժը կորցրած ճանաչել Բերդ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 128-Ա որոշումը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021թ. հունվարի 1-ից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 59-Ն**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԸՍՏ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8, 9, 10, 11 և 12 հոդվածների պահանջներով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, 14-րդ հոդվածի 4-րդ մասով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ ըստ գոտիավորման, համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թ. հունվարի 1-ից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՍՐՅԱՆ ԳԱԳԻԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Համայնքի ղեկավար՝** ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 60-Ն**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի 2021թվականի տեղական բյուջեն՝
1)եկամուտների գծով 1224680.0 հազար դրամ,
2)ծախսերի գծով 1224680.0 հազար դրամ,
3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0.0 հազար դրամ:

2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ (հատված 1):
3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման՝ (հատված 2):
4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 3):
5.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝(հատված 4):
6.Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝(հատված 5):
7.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 6):
8.Սահմանել,որ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

9.Թույլատրել համայնքի ղեկավարին՝
1)գանձապետական հաշվի 2020թվականի տարեվերջյան ազատ մնացորդն ինքնուրույն ներառել 2021 թվականի բյուջեի եկամտային մասում և ծախսային մասում ընդգրկել առաջնահերթություն պահանջող ծախսերի ֆինանսավորման համար,
2)հիմք ընդունելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետը, համայնքի բյուջեում կատարել փոփոխություններ, որոնց հանրագումարը չի կարող գերազանցել հաստատված ծավալի 15%-ը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

Համայնքի ղեկավար՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

**01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 61-Ա**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԱՆՎԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչներ դիմել են Բերդի համայնքապետարան, որ վճարել են իրենց կամ իրենց հարազատների անվամբ գրանցված գույքահարկի գծով առաջացած պարտքերը և խնդրել զեղչել առաջացած տույժերը:

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ մասի 1-ին կետով, 5-րդ, 8-րդ մասերի պահանջներով և <<Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին>>28.04.2012թ. ՀՀ օրենքով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարան դիմած բնակիչների անվամբ գրանցված փոխադրամիջոցների և շինությունների գույքահարկի գծով տրամադրել արտոնություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Բերդ, (0267)2-37-79, (0267)2-10-81, berd.tavush@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 62-Ա**

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի տարբեր բնակավայրերի բնակիչներ դիմել են Բերդի համայնքապետարան, որ վճարել են իրենց կամ իրենց հարազատների անվամբ գրանցված հողի հարկի գծով առաջացած պարտքերը և խնդրել զեղչել առաջացած տույժերը:

Ղեկավարվելով «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ մասի 1-ին կետով, 5-րդ, 8-րդ մասերի պահանջներով և «Գույքահարկի և հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին» 28.04.2012թ. ՀՀ օրենքով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդի համայնքապետարան դիմած ֆիզիկական անձանց տրամադրել հողի հարկի գծով արտոնություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՄԱՅԱԿ

ԱՎԱԼՅԱՆ ԱՆՆԱ

ԴԱԼԼԱՔՅԱՆ ԳԱԳԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՀԱՅՐԻԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՇՈՏ

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԱՐՏՈՒՐ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ

ՍԱՖԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

**Համայնքի ղեկավար՝** ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ